ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՐԱՐՏՈՒ—ՀԱՅԱՍՏԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ

Պատմ. գիտ. դոկտոր Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ, Դ. Ե. ԱՐԵՇՅԱՆ

Հայ ժողովրդի ծագման հարցերը, նաև Ուրարտու-Հայաստան պրոբլեմը, քննարկվում են սովորաբար գրավոր աղբյուրների, լեզվաբանական տվյալների, հոգևոր մշակույթի նյութերի օգնությամբ։ Այդ կապակցությամբ գրեթե լիովին շրջանցվում են համապատասխան ժամանակաշրջանի պատմության հիմնական աղբյուրները՝ հնագիտական նյութերը, իսկ եթե վկայակոչվում են հնագիտական այս կամ այն գտածոներ, ապա միայն պատկերազարդման նպատակով՝ առանց մասնագիտական վերլուծության։ Ուստի առաջնահերթ անհրաժեշտություն է դառնում հնագետների տեսակետի համառոտ շարադրումը գիտական պարբերականներում։

Ըստ ժամանակաշրջանների քարտեզագրելով բնակավայրերի ու դամբարանաղաշտերի տեղաբաշխումը, այդ հնավայրերում հայտնաբերված ճարտարապետական կառույցների ձևերն ու շինարարական եղանակները, քարից, կավից, մետաղներից, փայտից և այլ նյութերից պատրաստված աշխատանքի գործիքների, զենքերի, զարդերի, կենցաղի առարկաների ձևերը, թաղման սովորույթներն արտացոլող յուրահատուկ մնացորդները, կիրառական արվեստի առարկաներով ներկայացված գեղարվեստական տարբեր ոճերի տարածումը, աշխարհի հնագետները հանգել են խիստ որոշակի եզրակացությունների։ Նրանք հայտնաբերել են, որ նշված մնացորդների որոշակի տիպերը, միակցված եղանակով հանդես գալով տարբեր հնավայրերում, զբաղեցնում են որոշակի աշխարհագրական տարածքներ և գոյություն են ունեցել ժամանակագրական որոշակի սահմաններում։ Համաշխարհային հնագիտության փորձը միանշանակ ցույց է տվել, որ գոյություն չունի հիմնական բոլոր հատկանիշներով իրար կրկնող հնագիտական երկու մշակույթ։ Յուրաքանչյուր հնագիտական մշակույթ մարդկանց որոշակի ընդհանրության գործունեության արգասիք է և բնութագրում է տվյալ ընդհանրության նմանությունն ու տարբերությունը մարդկանց այլ ընդհանրություններից։ Այդտեղից էլ բնականոն ճանապարհով առաջացել է հնագիտական մշակույթների, այսինքն՝ նրանց ստեղծող մարդկանց ընդհանրությունների և առանձին էթնոսների պատմական ճակատագրի փոխկապվածության հարցը։ Դրա պարզաբանմանը նվիրվել են հարյուրավոր գիտական աշխատություններ։

Հնագիտական տարբեր մշակույթների փոփոխությամբ արտացոլված էթնոսների տեղաշարժերը (միգրացիաները, նվաճումները, ներխուժումները) վկայված են նաև բազմաթիվ գրավոր աղբյուրներով, որը աղբյուրների համեմատական ստուգման օբյեկտիվ հիմք է ստեղծում և հավաստում է հնագիտական տվյալներից կազմված պատկերի համապատասխանությունը պատմական իրողությանը։ Այսպես, օրինակ, հունա-հռոմեական պատմիչների կողմից մանրամասն նկարագրված հռոմեական կայսրության սահմանների նվաճողական ընդարձակումը հնագիտորեն ներկայանում է հռոմեացիների բնակավայրերի, և ընդհանրապես՝ հռոմեական նյութական մշակույթի տարածմամբ Ֆրանսիայում, Անգլիայում, Ռումինիայում, Ասորիքում (Սիրիայում) և այլուր, որտեղ այդ մշակույթը ցայտուն հակադրված է տեղաբնիկների հնագիտական մշակույթներին։

Միջերկրականի և Սև ծովի ափերին սփռված հունական գաղութների նյութական մշակույթը բոլոր դեպքերում ակնառու կերպով տարբերվում է շրջապատի տեղաբնիկների թողած հնագիտական մշակույթներից։ Միջնա-

դարյան Հայաստանն ու Անդրկովկասը ուսումնասիրող հնագետները անվրեպ տարրերում են այս տարածքում պարբերաբար գտնվող եկվոր նվաճողների՝ խազարների (VII դար) և մոնղոլների (XIII—XIV դարեր) թաղումները տեղաբնիկ հայ բնակչության դերեզմաններից։ Ընդսմին, այդ եկվորների էթնիկ պատկանելության բնորոշումը կատարվում է առանց գրավոր աղբյուրների կամ մարդաբանական տվյալների անմիջական օգտագործման, թաղման ծեսի և դամբարաններում պահպանված գույքի առանձնահատկությունների քննության միջոցով՝ քանի որ խազարներին կամ մոնղոլներին յուրահատուկ հնագիտական մշակույթի համալիրը հայտի է նրանց հայրենիքից։ Հնագիտական այդ եզրակացությունները այնուհետև հաստատվել են պատմիչների վկայությունների վերլուծությամբ։

Այսպիսով, Ուրարտու-Հայաստան պրոբլեմը հնագիտորեն ստանում է հետևյալ ձևակերպումը, 1) Հայկական լեռնաշխարհի տարածքում, մ. թ. ա. IX—VIII դդ. առաջին կեսին՝ այսինքն գրավոր աղբյուրներով վկայված Վանի թագավորության կամ Ուրարտական պետության ձևավորման շրջանում, գոյություն ունեցե՞լ է արդյոք մեկ միասնական հնագիտական մշակույթ, որը զարգանալով՝ առանց իրեն ստեղծող էթնոսի կտրուկ փոփոխության, աստիճանաբար վերածվել է այն մշակույթի, որը մեզ հայտնի է որպես հետագա դարերի հայկական հնագիտական մշակույթը. 2) եթե այդ ժամանակահատվածում Հայաստանում առկա են տարբեր էթնոսներ ներկայացնող հնագիտական տարբեր մշակույթներ, ապա դրանցից ո՞րն է այդ դարերի հայկական մշակույթը և ինչպիսի՞ փոխհարաբերություն գոյություն ունի այդ մշակույթների և հետագա հայկական մշակույթի միջև։ Այստեղ սահմանափակվենք ըստ հնագիտական տվյալների առաջին հարցին պատասխանելով, այն է՝ մեկ, թե մեկից ավելի էթնոսներ են ապրել Հայկական լեռնաշխարհում նշված դարերում։ Զուգահեռաբար կարելի է սեպագիր արձանագրությունների տվյալները և հնագիտական պեղումների արդյունքները ենթարկել փոխադարձ ստուգման։

Խուռի-ուրարտական լեզվաընտանիքին պատկանող բիայներեն (ուրարտերեն) լեզվով գրված սեպագիր արձանագրություններից հայտնի է, որ Բիայնիլի թագավորությունը (ասուրերեն, այդ թվում նաև իրենց՝ բիայնացիների կողմից գրված տեքստերում՝ Ուրարտու) կազմավորվել է մ. թ. ա. IX դարի կեսին Վանա լճի ավազանում։ Այստեղից նույն դարի վերջին քառորդի և VIII դարի առաջին կեսի ընթացքում բիայնացիները (ուրարտացիները) բազմաթիվ արշավանքների միջոցով ստեղծել են Հայկական լեռնաշխարհի գրեթե ամբողջությամբ ընդգրկող Ուրարտական տերությունը։ Այսպիսով, համեմատելով մ. թ. ա. IX դարի վերջի և VIII դարի սկզբի Վանա լճի ավազանի բիայնական (ուրարտական) հնագիտական մշակույթը նույն ժամանակաշրջանում Հայաստանի այլ մասերում գոյություն ունեցած մշակութային համալիրների հետ կարելի է հանգել նշված խնդրի լուծմանը։ Համեմատության համար նախընտրելի է Հայկական լեռնաշխարհի այն տարածքը, որը հնագիտորեն առավելապես ուսումնասիրված է, այսինքն՝ Կուր-արաքսյան միջագետքը, թեև համանման վերլուծություն այժմ կարելի է կատարել նաև Պարսկահայքի և Խարբերդի դաշտի նյութերով։

Սկզբից ևեթ նշենք, որ առաջավոր Ասիայի մշակույթների շարքում ուրարտական մշակույթը գրավում է իր միանգամայն ուրույն տեղը։ Այն անշուշտ եղել է հարևան երկրների՝ Ասորեստանի, խեթական աշխարհի, նորխեթական կազմավորումների ազդեցությունը, որը իրեն զգացնել է տալիս հատկապես վերնախավային, պալատական մշակույթի ու արվեստի ոլորտում, սակայն բուն ուրարտական մշակույթը օժտված է ինքնատիպությամբ ու անկրկնելի գծերով։

Ուրարտական հնագիտական մշակույթի տարածումը Վանա լճից դեպի Կուր-արաքսյան միջագետքը լիովին համընկնում է ուրարտական թագավորների՝ սեպագիր արձանագրություններում նկարագրված նվաճումների հետ։ Մ. թ. ա. VIII դարի առաջին քառորդում Արարատյան դաշտի խոշոր բնա-

կավայրերում (Դվին, Մեծամոր, Այգեհատ, Շամիրամ, Արտաշատ, Կարմիր բլուր և այլն) կյանքը միաժամանակ ընդհատվել է, ըստ որում բնակավայրերի կործանումը հետևանք էր ռազմական գրոհի, որն ուղեկցվել է հրդեհներով։ Միատեսակ այդ հրդեհների շերտերում հայտնաբերվել են հարձակվողների երկաթե նետասլաքները, որոնք չեն տարբերվում ուրարտական բանակում գործածվածներից և նման չեն տեղաբնիկների օգտագործած բրոնզե նետասլաքներին։ Նվաճողները ոչ միայն ձգտել են վարչաքաղաքական իշխանության հաստատմանը, այլև թշնամաբար էին տրամադրված տեղաբնիկ ժողովրդի նկատմամբ։ Շամիրամի պեղումները ցույց են տվել, որ զավթիչները պղծել են սրբավայրերը, քանդել են տեղաբնիկների նախնիների գերեզմանները։ Առավել նշանակալից է նվաճված տարածքներում ուրարտացիների կողմից կառուցված բնակավայրերի տեղադրման պատկերը։ Արարատյան դաշտում և պատմաաշխարհագրական այլ շրջանակներում նրանց շինարարությանը անմիջականորեն նախորդող բնակություն չի եղել կամ այն ոչնչացվել է ուրարտացիների կողմից։ Այդ իրողությունը փաստարկված է Էրեբունիի, Արամուսի, Արագածի, Օշականի պեղումներով։ Դրան զուգահեռ նույն ավանդույթը վկայված է նաև բիայներեն (ուրարտերեն) գրված շինարարական արձանագրություններում։ Վավերագրելով իրենց գործունեությունը, ուրարտական թագավորները հայտնում են, որ, նախքան շինարարության նախաձեռնումը, տվյալ վայրում «երկիրը դատարկ էր, ոչ մի բան այնտեղ կառուցված չէր»։ Այդ փաստերից կարելի է եզրակացնել, որ տեղաբնիկների լքված բնակավայրերի հարմարավետ տարածքները ուրարտացիները համարել են «անիծյալ»։

Նվաճման հետևանքով Կուր-արաքսյան միջագետքում տարածվել է ուրարտացիների հնագիտական մշակույթը, որը էական բազմապիսի հատկանիշներով տարբերվել է տեղաբնիկների մշակույթից։ Այդ տարբերությունները ակնառու են մշակույթի բոլոր ասպարեզներում։

Այսպես, տեղաբնիկների ամրոցաշինությունը, որը ներկայացված է այսպես կոչված «կիկլոպյան» հարյուրավոր ամրոց-բնակավայրերով ու քաղաքատեղիներով, բնականոն ճանապարհով զարգացել է լեռնային տեղանքի պաշտպանունակության լիակատար օգտագործման ուղղությամբ։ Նրանց ամրոցների պարիսպների հատակագծերը կորությամբ հետևում են բնական ռելիեֆի բեկվածքներին, իսկ աշտարակներն ու որմնահեցերը տեղադրվել են ոչ համաչափ՝ միայն պաշտպանական համակարգի առավելապես կարևոր հատվածներում։ Ուրարտական ամրոցաշինությունը, նույնպես օգտագործելով բնական բարձունքների անառիկ դիրքը, պարիսպների հատակագծային ուրվագիծը սովորաբար հարմարեցրել է դրան ոչ թե կորաձև, այլ ուղղանկյուն անցումների միջոցով, որպիսիք ստեղծելով «մեռյալ տարածություններ» հաճախակի թուլացնում էին պաշտպանունակությունը։ Ռազմական նպատակահարմարության տեսանկյունից էլ ավելի տարօրինակ են թվում բարձր բլուրների վրա տեղադրված ուրարտական միջնաբերդերի պարիսպները, որոնք չլատվել են իրարից միևնույն հեռավորությամբ ռիթմիկորեն տեղադրված որմնահեցերով։ Վերջիններս պաշտպանական որոշակի դեր կունենային հարթավայրային պայմաններում, մինչդեռ բարձրացված լինելով անառիկ սարալանջերի վրա, դրանք պահպանել են հիմնականում միայն գեղագիտական նշանակությունը։

Համաշխարհային գիտության մեջ ընդունված է այն կարծիքը, որի համաձայն աշխատանքի գործիքները միայն նվազագույն չափով կարող են ունենալ այս կամ այն ժողովրդին յուրահատուկ ձևեր։ Սակայն ուրարտացիների և Կուր-արաքսյան միջագետքի տեղաբնիկների հնագիտական մշակույթների համեմատության ընթացքում աչքի է զարնում նույնիսկ աշխատանքի գործիքների միջև եղած տարբերությունը։ Այսպես, ցորեն հնձելու համար տեղաբնիկները օգտագործել են փոքրիկ գերանդիներ (որոնք պահպանվել են հայկական ազգագրական իրականության մեջ «քոլի մանգաղն» անունով), իսկ ուրարտացիների հիմնական գործիքը իսկական մանգաղն էր։

կաթնամթերքի վերամշակման համար տեղաբնիկները օգտագործել են ձվաձև իրանով կավե խնոցի, որ հենել են հատակին և ճոճել՝ հորիզոնական զանգվածեղ կանթից բռնելով, իսկ ուրարտական մշակույթում կաթնամթերքի վերամշակման հիմնական գործիքը տիկն էր։ Զարմանալի է տեղաբնիկների և ուրարտացիների տնտեսական դանակների ձևերի տարբերությունը։ Տեղաբնիկների դանակները օգտագործվել են ժամանակակից սեղանի դանակների նման, կտրելու գործողությունը իրականացվում էր հորիզոնական ուղղությամբ գործիքը առաջ և հետ շարժելու միջոցով։ Ուրարտական դանակներով կտրելու գործողությունը կատարվում էր վերից վար, շեղբը քաշելով դեպի կտրողը։

Ավելի ցայտուն են տարբերությունները զենքերի գրեթե բոլոր խմբերի միջև։ Տեղաբնիկները արտադրել են երկու մետաղից՝ պղնձից ու բրոնզից բաղադրյալ կառուցվածքով դաշույններ։ Զենքի այդ խումբը միանգամայն անծանոթ է ուրարտական հնագիտական մշակույթին, որին բնորոշ են միակուռ երկաթե օրինակները։ Տեղաբնիկները մշակել են պղնձատե սրերի ձևերի չորս տարբեր տիպեր, որոնցից և ոչ մեկը չի ներկայացված ուրարտական մշակույթում։ Միաժամանակ ուրարտական կարճ և միջին երկարության բրոնզե բարդ հավելումներով (շրջանակներ, օղակներ, գամեր) ծակող-հատող պղնձատե սրերը տարածում չեն ունեցել տեղաբնիկների մշակույթում՝ մինչև ուրարտական նվաճումները։ Նույնքան տարբեր են տեղական և ուրարտական ձիասարքերի ձևերը։ Տեղաբնիկների սանձերը ունեցել են ուղիղ, իսկ ուրարտականները՝ կոր երախճաններ, տարբեր է եղել նաև սանձափոկերի ամրացման ձևը։ Ուրարտական ձիասարքի անբաժանելի մասն են կազմել զանգակիկները, որոնք չեն օգտագործվել տեղաբնիկների կողմից։

Տարազը մշտապես համարվել է տվյալ ժողովրդին յուրահատուկ մշակութային տարրերից մեկը։ Թեև զգեստը բնական պատճառով լավ չի պահպանվում հնագիտական մշակույթի կազմում, սակայն քննության հարցին վերաբերող տվյալները բավականաչափ խոսուն են։ Կուր-արաքսյան միջադետքի տեղաբնիկները հագնում էին դեպի վեր կեռացած քթերով կոշիկներ։ Ուրարտական մշակութային համալիրներում կոշիկների այդ ձևը հայտնի չէ։ Ուրարտացիների կոշիկները, առանց բացառության, ունեցել են ուղիղ, երկար, սուր քթեր։ Թիկնոցների և զգեստների ամրացման համար ուրարտացիները լայնորեն օգտագործել են ժամանակակից անգլիական քորոց հիշեցնող տարբեր ձևերի շիգեղեր, որոնք չէին գործածվում տեղաբնիկների մշակույթում։

Վերջապես ամենատարածված զարդախմբի՝ զարդարուն ապարանջանների քննությունը նույնպես ներկայացնում է մոտեցման տարբեր սկզբունքներ տարազի ձևավորման գործում։ Տեղաբնիկների մետաղական բազմատեսակ ապարանջանները, որոնց կտրվածքը կլոր է կամ տափակ, զարդարվել են ամբողջ մակերեսը ծածկող նախշազարդով, իսկ ուրարտական ապարանջաններին յուրահատուկ ձևավորումը ծայրային է՝ օձերի կամ այլ կենդանիների գլուխներ պատկերող ձուլածո քանդակներով։

Հնագետներին վաղուց հայտնի փաստ է, որ մեր նախնիների կյանքում խեցեղենի արտադրությունը և խեցանոթները անհամեմատ ավելի մեծ նշանակություն են ունեցել, քան նոր ժամանակներում։ Կավանոթների գործառությունը ոչ միայն կենցաղային-կիրառական էր, այլև պաշտամունքային։ Խեցեգործական ոճերը հստակորեն արտացոլել են իրենց արտադրողների ու օգտագործողների գեղագիտական ճաշակը, պատկերացումները լավագույն համաչափությունների, գերադասելի գույների և զարդանախշի ընդունված համակարգի մասին։ Այստեղ չի կարելի զանց առնել այն փաստը, որ Երևանի պետական համալսարանի յուրաքանչյուր շրջանավարտ-հնագետը (եթե իզուր չի սովորել) հեշտությամբ տարբերում է ուրարտական կավանոթները Կուր-արաքսյան միջագետքի մ. թ. ա. I հազարամյակի սկզբի տեղաբնիկների խեցեղենից։ Տեղաբնիկների կավանոթների տասնյակ;

հազարավոր ամբողջական և բեկորային օրինակներ ներկայացնում են միմիայն սև և գորշ փայլեցված խեցեղենի տարբերակներ։ Ուրարտական կարմիր, նարնջագույն, բալագույն փայլեցված խեցեղենը հայտնի չէ տեղաբնիկների հնագիտական մշակույթում։ Նույնը կարելի է ասել նաև կավանոթների ձևերի մասին։ Ուրարտական մշակույթին բնորոշ բողբոջաձև իրանով հսկայական կարասները, գարեջրի պատրաստման «սիգարաձև» անոթները, կոնաձև տակառները, երեքնուկաձև պսակով սափորները, լայնաբերան ծորակավոր «կաթնամանները», անցքերով միջնորմով երկմաս ճրագները, երկու եղջերավոր կանթերով կճուճիկ-գավաթները, դեպի վեր լայնացող պատերով փիալաները, ասկոսները, եղջերանոթները, պսակաձև գավաթները հայտնի չէին Կուր-արաքսյան միջադետքում մինչև ուրարտական մշակույթի տարածվելը։ Մյուս կողմից տեղաբնիկների մշակույթին բնորոշ շատ նեղ վզիկով, երկկոնիկ իրանով անկանթ կժեր, երկկանթ խոշոր կճուճներ և այլ ձևեր մ. թ. ա. VIII դարի սկզբին խորթ էին ուրարտական մշակույթին։

Ընթերցողն է՛լ ավելի ակնառու կարող է դիտել ուրարտական և տեղական մշակույթների տարբերությունը, եթե ծանոթանալու լինի թաղման սովորույթներին։ Ուրարտացիները այրել են իրենց ննջեցյալներին և աճյունը թաղել աճյունասափորներում, իսկ տեղաբնիկները դործածել են տարբեր ձևի դիաթաղումներ (մասնատված, կծկված, նստած), սովորաբար կացարանի ձևը վերարտադրող քարարկղում կամ սալարկղում։

Այսպիսով, հնագիտական վերլուծությունը միանշանակ եզրակացնում է, որ Հայկական լեռնաշխարհի տարածքը զբաղեցնում են մ. թ. ա. I հազարամյակի 1-ին քառորդի իրարից արմատապես տարբեր հնագիտական մշակույթներ, որոնք ստեղծվել են տարբեր էթնոսների կողմից։ Այս աներկբա փաստի անտեսումը կարող է գիտության տեսանկյունից զավեշտական հորինումներ ծնել։

Այդպիսի սանձազերծ երևակայության արգասիք են Ռ. Ա. Իշխանյանի վերջերս լույս տեսած երկու գրքույկները՝ «Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր» (Երևան, «Հայաստան», 1988 և «Պատկերազարդ պատմություն հայոց», գիրք առաջին, Երևան, «Արևիկ», 1989)։ Մի կողմ թողնելով հեղինակի քաղաքական դրդապատճառներով ծնած «լեզվաբանական» վերլուծությունները, նշենք այդ հրատարակությունների միայն մի քանի հատվածներ, որպեսզի ընթերցողը պատկերացնի, թե ինչպես է վարվում հեղինակը հնագիտության և նրա տվյալների հետ։ Առաջին գրքի 34-րդ էջում առանց որևէ փաստական տվյալ բերելու և հղելով «Հայրենիքի ձայն» թերթը Ռ. Ա. Իշխանյանը հայտարարում է. «...Հայկական լեռնաշխարհի մշակույթը հնագույն ժամանակներից սկսած մշակութային միևնույն տարրի անընդմեջ զարգացման ամբողջություն է, ...դա հենց հայկական մշակութային տարրի պատմական առանձին փուլերի արտահայտությունն է»։ Պարզ չէ՝ թե ո՞ր հնագետն է հանգել նման եզրակացության։ Մինչդեռ մենք ամենայն պատասխանատվությամբ կարող ենք պնդել, որ աշխարհի թեկուզ և մեկ պրոֆեսիոնալ հնագետ, ոչ միայն հայ, այլ որևէ ժողովրդի մշակույթի պատմական զարգացման վերաբերյալ չի անելու նման անհեթեթ հայտարարություն։ Երկրորդ գրքի 64-րդ էջում արտատպված պատկերում հեղինակը մ. թ. ա. I հազարամյակի սկզբի իրերին խառնել է զարգացած միջնադարի գտածոներ։ Առաջին գրքի 66—67-րդ էջերում և երկրորդի 81-րդում պատկերված է ասուրա-բաբելական արվեստի կանոնիկ տեսարաններից մեկը՝ սրբազան ծառի առջևում կատարվող ծիսակատարությունը, որը, սակայն, այդտեղ մեկնաբանված է որպես հայկական «ծառագուշակություն»։ «Պատկերազարդ պատմության» 35—39-րդ էջերում պատկերելով տեղաբնիկների մ. թ. ա. II—I հազարամյակների սահմանագլխի նետասլաքներ, դաշույններ, սակրեր, արձանիկներ, հեղինակն առանց բացառության և առանց մասնագիտական հիմնավորման մակագրում է «Հայք»։ Մինչդեռ 63-րդ էջում ներկայացնելով բիայնացիների (ուրարտացիների) դիակիզու-

մով դամբարանը, բացատրում է՝ «Հայ իշխանի դամբարան մ. թ. ա. VIII դար (Երևան)»։

Առաջին հայացքից կարող է թվալ, որ այդ թյուրիմացությունները ժամանակակից հնագիտությանը Ռ. Ա. Իշխանյանի անտեղյակ լինելու հետևանք են։ Սակայն դիտելով հնագիտական նյութի նրա կողմից օգտագործման ընդհանուր սկզբունքը, կարելի է որոշակիորեն մեկ այլ միտում բացահայտել։ Ելնելով իր կողմից առաջ քաշվող Ուրարտու—Արմինա—Հայք հավասարությունից («Պատկերագարդ պատմություն», էջ 40), Ռ. Ա. Իշխանյանը խառը եղանակով, առանց տարբերելու, ներկայացնում է թե՛ տեղաբնիկների մշակույթի հուշարձանները, թե՛ ուրարտացիների արտադրանքը։

Ռ. Ա. Իշխանյանի դրքերի նման հրատարակությունների վնասարերությունը մեծանում է այնքանով, որքանով դրանք ուղղված են լայն ընթերցողին, հատկապես՝ երիտասարդությանը։ Այդ երկու գրքույկներն ըստ էության սերմանում են այն գաղափարը, որ գիտության մեջ կարելի է ցանկացած մտացածին գրույթ հաստատել հայասարությունների միջոցով, առանց երկարատև և քրտնաջան պրպտումների, առանց մասնակցելու գիտահետազոտական աշխատանքի ընթացքի մանրամասնություններին, առանց ծանոթանալու նախորդ հետազոտողների բոլոր ճիշտ թե սխեմեի կամ մերժելի տեսակետներին, մոտեցումներին, մեթոդներին ու եզրակացություններին։

АРХЕОЛОГИЯ И ПРОБЛЕМА УРАРТУ—АРМЕНИЯ

Доктор ист. наук Г. А. ТИРАЦЯН, Г. Е. АРЕШЯН

Резюме

При освещении вопросов о происхождении армянского народа и тем более проблемы Урарту—Армения большую роль может сыграть привлечение археологического материала. Сравнительный анализ отдельных аспектов урартской культуры—фортификационное дело и крепостное строительство, орудия труда, оружие, керамика, предметы украшения, одежда и т. д.—с соответствующими разделами культуры местных племен Армянского нагорья выявляет весьма существенную разницу между ними. Следовательно, армянской можно назвать только одну из вышеназванных сопоставляемых культур. Между тем в вышедших недавно в свет книжках филолога Р. А. Ишханяна именно это обстоятельство полностью игнорируется, что лишний раз доказывает несостоятельность применяемых им методов при решении таких проблематичных тем истории армянского народа как происхождение армян или взаимоотношение Урарту—Армении.